ընդունի զնա ժողովուրդն. անտի եկեալ ի Կամէնից՝ առնէ զմիաբանութիւն ընդ Կամէնցացւոց, ըստ կերպի նախորդացն իւրոց, նոյեմ. 17. և ի Սիկիզմունտէ Գ.ժէն Լեհաց թագաւորէն հաստատի առաջնորդ Հայոց յամին 1629, մարտի 6։ Ասէն ի Կամէնից, արքեպիսկոպոսն ձեռնադրէ քահանայ զՏէր Օնոփրիոսն, որում զկնի 22 աւուրց զառաջին պատարագել հրամայէ. բայց Գրիգոր Կեսարացի վարդապետն՝ որ յայնժամ անդ էր նուիրակ Էջմիածնի, ընդդիմանայ. զի չէ պարտ նախ քան զքառասունն նորընծային պատարագել. վասն որոյ արքեպիսկոպոսն զայրացեալ՝ զերկոսին եկեղեցիսն փակէ, և զԿեսարացին՝ զի մի՛ ի Լէօպոլիս անցցէ, վտարէ անտի. իսկ հեռացեալ ոստի՝ զբանադրանս առաքէ Նիկողայոսի. որ՝ զայն իբրեւ անհաստատ ոչ ինչ համարի, գոլով ինքն ընդ իշխանութեամբ Սրբազան Փափին։ — Առաքել պատմիչ։

1629. ՌՀԸ. (Նիկողայոս արքեպիսկոպոսն) ժողովեալ զղօրականս ոմանս և զզպրոցականսն Լեհաց, հանդերձ քահանայիւք և մեծամեծօքն Լատինացւոց, գայ առ մեծ դուռն եկեղեցւոյն, և զհայրապետական զգեստսն զգեցեալ՝ հրամայէ արուեստաւորաց՝ բանալ. որոյ բացելոյ՝ ինքն սկսանելով զերգն Զքեզ, Աստուած, գովեմք, մնանէ յեկեղեցին երգովք և նուագարանօք, գոհանալով զԱստուծոյ. և յետոյ տիրէ բովանդակ գանձուց եկեղեցւոյն։ Վասն որոյ Լէօպոլսեցիքն դիմեն առ Մովսէս կաթողիկոսն, յորմէ և ոչ զմի գտանեն օգնութիւն. զի կաթողիկոսն զոլով ուղղափառ՝ հաճոյ էր նմա զոր ապարն արքեպիսկոպոսն. եւս զի թագաւորն և այլք՝ առ որս թէ և գրէրն՝ ոչ կարէին այլապէս առնել։

1630. ՌՁԹ. Երարձ ի չարականէն Ով հրաշալի նախահարք, զերիս յետին տունսն, ի հերձուածողաց ոմանց յաւելեալս, որպէս յայտ է ի Թղթոյ Նորա և առ մեր Լէօպոլսեցիս։

Կամէնցացիք, ապրիլի 5, զմեծածախ և զփառահեղ զանկակատունն Ս. Նիկողայոսի հայրապետին չինել սկսան, և ՌՁԲ (1633) թուին աւարտեցին։ — Ի ցիշատակարանէ։

Հոկտ. 22. Տէր Նիկողայոս Թորոսենց արքեպիսկոպոսն մեր՝ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ արար ի Լէօպոլիս, առաջի Պ. Պ. Միքայելի ad Annunciatione Բրովէնցիալին Կարմելիդաց Եղիայի a SS.mo Sacramento Բրիօրին Կարմելիդաց Լէօպոլսի, և Տ. Թոմասու Էջմանովքի Ցիսուսեան, և այլոց բազմաց։ Բացատրէ ի նմին զամենայն յօդուածսն հաւատոյ, և իւր արարեալ առաջի Մելքիսեթեկ կաթոկիկոսին ի ձեռնադրութեան իւրում՝ ի նորին դաւանութեան՝ զուղղափառ դաւանութիւնն իւր։

Ցայսմ ամի գայ ի Լէօպոլիս նուիրակ Մովսէսի կաթողիկոսի Խաչատուր վարդապետն Կեսարացի, որ մինչ արքեպիսկոպոսն ընդդէմ կամաց նուիրակին հրամայեաց քահանայի իւրում ընթեռնուլ դաւետարան, դարձեալ ի ժա-